



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԵԸ. 16.

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՅՈՒՆԻՍ 1. 1877.

ԹԻՒ 6.


ՍԱՌՈՅՆԵՐՈՒ ՄԷՋ ՆՈՒ ՄԸ

Կրտսեր եղբայրս նաևակ մը նստաւ իկլ անուն նաւուն նաւապետին հետ դէպի նաւ երթալու համար, և մայրս արտասուարից աչօք ըսաւ նաւապետին. «Միրելից Տառ, Դաւիթին խնամ տար, և զանի սղջամբ ինձի դարձուր:»

Նաւապետն բառ. «Պատուծոյ կամքը կ'ըլլայ. ես որչափ հնար է կ'աշխատիմ աղագ անխտանդ ետ դարձը ներու:»

Իկլ նաւը կէտածուկ որսալու համար հեռաւոր և սառուցեալ տեղեր գնաց: Ես ալ երրորդ նաւապետ էի «Պիթրին» անուն նաւու մը մէջ, որ նայեպէսկա որսալու կ'երթար, բայց մեր նաւը դեռ պատրաստ չէր ճամբոյ ելլելու: Եղբայրս Դաւիթ երբ մտաւ դրան նաւապետ ըլլալ, խորհեցայ զանի մեր նաւուն մէջ առնել, բայց ս. բովնետեւ Տառ նաւապետը մեր հօրեղբորոցին էր, յարմար դատուեցաւ եղբայրս անոր քով գնել:

Շարաիթ մը ետքը մ'ըր նաւն ալ ճամբոյ ելաւ հեռաւոր տեղեր երթալու: Հովը յիշող շրջալուն համար



ճամբան բաւական սպասելէ ետքը վերջապէս սառուցեալ տեղերն հասնելով սկսանք ջանալ շատ ձուկ որ սալու, քանզի բաւական ժամանակ կորուսած էինք:

Պրըֆ նաւապետը միշտ կայմին վրայ կենալով ասդին անդին կը նայէր ձուկ տեսնելու, կամ սառուցներուն մէջէն ճամբայ ցուցունելու համար: Վերջապէս նաւապետը վերէն սկսաւ կանչել, «Ահա ձուկ մը»: Այս ձայնին վրայ մակոյղներն իջուցինք, և երկար ատեն աշխատելէ ետքը կէտը դարձնելով նաւը բերինք: Այսպէս քանի մը կէտ որոսցինք, բայց Պրըֆ նաւապետն աւելի ձուկ գտնել յուսով նաւը յառաջ քշեց դէպ ի հիւսիս: Սառուցներն ամէն կողմ բռնած էին, և սեղ տեղ նեղ անցքեր միայն կային: Այն նեղ ճամբաներէն անցնելու ջանացինք, և կը յուսայինք բաց ճամբայ գտնել, բայց մեր յոյսն ի դերեւ ելաւ:

Երեկոյ մը երբ մեր ճամբան կը շարունակէինք, տեսանք որ քիչ մը անդէն նաւ մը կու գար դէպ ի մեզ: Կարծեցի թէ իկ նաւն էր ուր կը գտնուէր եղբայրս, բայց քիչ մը ետքը տեսայ որ «Լայրն», անուն ուրիշ նաւ մէն էր: Երբ նաւը մեր քովէն կ'անցնէր, նաւապետը զմեզ բարեւելով ըսաւ. «Յաւով կ'իմացնեմ ձեզի որ իկ նաւը Մէլվիլի ծոցը սառուցներու մէջ մնաց, և չեմ յուսար թէ կ'ազատի, վասնզի նաւը կողին վրայ նստած է, և կայմերը խորտակուած են: Եթէ քիչ մ'ալ հոն մնայի նաւուն օգնելու համար, իմ նաւս ալ պիտի կորսուէր»: Նաւապետն այս լուրը մեզի տալէն ետքն իր ճամբան շարունակեց: Այս լուրին վրայ Պրըֆ նաւապետն ըսաւ. «Մեր պարտքն է, որչափ հնար է աշխատիլ այն թշուառներուն օգնել, բայց զգուշանալու ենք որ մեզի ալ միեւնոյն դժբախտութիւնը չպատահի»:

Նոյն դիշեր սառուցները մեր նաւուն վրայ քալեցին, բայց մենք չըսպասեցինք որ սառուցները մեզ բոլորովին պաշարեն, աճապարելով մեր նաւին համար աւազան մը պատրաստեցինք, և որովհետեւ արեւելեան կողմէն ցամաքն ալ կ'երեւէր, մեր տեղն ըստ բաւականին ապահով էր: Թէպէտ մեր նաւը ըստ բաւականին լեցուած չէր, կը յուսայինք սակայն ձմեռունէն առաջ հայրենիք դառնալ: Ճամբան մեզի հանդիպող նաւն ըսած էր իկ նաւուն տեղը: Այն

տեղը մեր նաւուն տեղէն իբր 33 ժամ հեռի էր. ուստի յոյս կար որ եթէ քիչ մ'ալ դէպ ի հիւսիս երթայինք, իկ նաւուն նաւաստիներէն ոմանք կրնայինք ազատել: Բայց մեր այս յոյսն ալ ի դերեւ ելաւ, վասնզի հետզհետէ սառուցները թանձրացան, և հարկ եղաւ ձմեռը հոն մնալ: Երբ տեսայ որ այլ եւս յոյս չկար մեր նաւուն յառաջ երթալու, հրաման ինդրեցի նաւապետէն երթալ իկ նաւուն նաւաստիները փնտռել: Մեր նաւաստիներէն շատերն ինծի հետ գալ ուզեցին, բայց ես Սանտի Մագդալ անուն քաջ նաւաստին միայն ուզեցի հետս առնել: Այս մարդը կէտ որսալու դացող նաւերու մէջ ծառայած էր ի մանկութենէ, և քանի մը անգամ բեւեռային ծովուն մէջ փակուած և ձմեռն հոն անցուցած էր: Սանտի Մագդալ և ես դահուկ մը, կերակուր, հրացան, վառօթ և կանթեղի համար իւր առինք: Ոչ վրան ունէինք և ոչ վառելիք, թարմ միս գտնելու համար կը յուսայինք ճամբան ծովային արջ կամ մշկարջառ որսալ: (Պիտէ շոտլանդացի)

ուրիշներուն կենաց պատճառ ըլլալու համար:

Այն բոյնն ուր անկազմ խորհուրդներ ձուերու պէս կը սպասեն որ օր մը երեւան ելլեն, փոքրիկ տղուս, և այս լրագիրը կարգացող ամէն փոքր տղու սիրտն է:

Հ Ո Վ

Դիւրին օրինակաւ մը պիտի ցուցնեմ ձեզի թէ ուստի յառաջ կու գայ հովը: Դնենք թէ ցուրտ օր մը տաք սենեկի մը մէջ նստած էք: Այս սենեկին ձեղուան և յատակին մօտ օդին մէջտեղ տարբերութիւն կայ: Անտարակոյս կայ: Օդն աւելի տաք է ձեղուան մօտ քան յատակին մօտ, և թերեւս այս տարբերութիւնը ձեր ձեռքին վրայ կրնաք զգալ: Ի՞նչ է այս տարբերութեան պատճառը: Պատճառը սա է. տաք օդը քան զցուրտ օդը թեթեւ է. ուստի երբ սենեկին օդը կը տաքնայ, թեթեւնալով դէպ ի վեր կ'ելլէ:

Պատահանք քիչ մը բանալով կը տեսնէք որ դուրսի ցուրտ օդը սենեկին տաք օդը դուրս մղելով անոր տեղը կը բռնէ: Երբ մարդ մը եկեղեցւոյ մէջ ուր կաղ կամ կանթեղ կը վառի՝ ամպիոնը կ'ելլէ, և կը զգայ որ վերի օդը քան զվարի օդը ջերմադոյն է: Կարծեմ թէ ձեռնէ շատերն աճառի պղպշակներ փչելով օդին մէջ թռուցած և կամ կարմիր օդապարիկ դունտերուն օդին մէջ թռչիլը ուշադրութեամբ դիտած են: Աճառի պղպշակներն և օդապարիկ դունդերն օդին մէջ վեր կ'ելլեն, վասնզի երկուքին ալ մէջի օդն քան դուրսի օդը թեթեւ է:

Հովերն ալ այս պատճառէն, այսինքն տաք օդին քան զցուրտ օդը թեթեւ ըլլալով դէպ ի վեր ելլելէն, յառաջ կու գան: Գիտէք որ հասարակածին մօտ շատ տաք է, և բեւեռներուն մօտ սաստիկ ցուրտ: Բեւեռներուն օդը ցուրտ և ծանր ըլլալով կը վազէ դէպ ի հասարակածը, ուր շատ տաք օդ անդայտայած և դէպ ի վեր ելած է: Բեւեռներէն եկած ցուրտ օդը կը բռնէ անդայտանալով դէպ ի վեր ելած տաք օդին տեղը, և տաք օդը կ'երթայ վերէն դէպ ի բեւեռներն ու ցրտանալով նորէն դէպ ի հասարակած կու գայ:

Օդապարկով ճամբորդութիւնը



ԹՈՉՆՈՅՆ ԲՈՅՆԸ

Ահա վերի բոյնին մէջ չորս ձու կայ: Քանի մը օրէն այս ձուերուն տեղ պիտի տեսնէք չորս մանր ձագ: Չուերուն մի դպչիք, քիչ ետքը թռչնոյ ձագեր պիտի գտնէք այն բունին մէջ:

Այս թռչնոյն բոյնը որ ծառին տեղեւորուն մէջ ծածկուած է՝ կը նմանի ուրիշ բոյնի մը ուր անարատ, սուրբ և անկազմ խորհուրդներ կան: Կը ինդրեմ Աստուծմէ որ երբ օրեր անցնին և այն խորհուրդները մեծնալով ձեւ և կերպարանք առնեն, նոյնպէս և անարատ և սուրբ մնան

նողները կը զգան թէ ցուրտ օդը դէպ ի հիւսիս կը վազէ կ'երթայ: Գանար, եան կզգեաց մէջ թէնէրիֆ կոչուած տնոցը ծովուն վրայ և լեւան ստորոտը կը փչէ հիւսիսային ցուրտ հով, իսկ լեւան գագաթը տաք հով մը որ հասարակածէն դէպ ի հիւսիս կ'երթայ:

կրնէր՝ տեսնելով որ վար իջնելու յարմար առնէ էր, խոհատունը եկաւ և ըսաւ. «Սյո, Սամուէլ, տան մէջ հացի համար ալ կանոն մը ունենալու ենք. եթէ կանոն չունենանք, հանգիստ չենք ըլլար: Իմ կանոնս սա է. երբ տղաքս բան մը կ'ուզեն, ինէ

թէ այս ամառ ձենէ բացակայ պիտի գտնուիմ: Կը յուսամ որ դուք հոս հանգարտ կը կենաք: Ձեր հիւանդ հօրեղբայրը կտակ մը ըրած է, որուն, կը խնդրեմ, ուշադրութեամբ մտիկ ըրէք: Ձեր հօրեղբայրն այսպէս կը գրէ. «Ստիկ մեկնելէդ յառաջ մէն մի ամի ցորեն տուր երեք որդիներէդ իւրաքանչիւրին, պատուիրելով անոնց այն ցորենը գործածել ինչպէս որ օգտակար կը կարծեն: Ի դարձիդ իր ցորենն ամենէն օգտակար կերպով գործածողը վարձատրես այնպէս՝ ինչպէս պիտի իմացնեմ քեզի: »

Սթէյնը իւրաքանչիւր տղուն մէյ մէկ ամի ցորեն տալէն ետքը ճամբայ ելաւ իր եղբորը երթալու:

Բաւական ժամանակ ետքը օր մը տղաքը տեսան որ կառքով մարդ մը կու գար դէպ իրենց դիւղը, և ձեռքը թիթեղէ փոքր սնտուկ մը ունէր:

Պերնարտ գոչեց, «Հայրս է, հայրս է:» Երեք տղայք վազեցին իրենց հայրը դիմաւորելու, համբուրեցին զանի, և կ'ուրախանային անոր ողջամբ գաւառաւորն վրայ: Մը Սթէյնըր այսպէս խօսեցաւ իր որդւոցը. «Սիրելի որդեակք, ձեր հօրեղբորը մահուան ատենն անոր քովն էի: Խաղաղ և երջանիկ մահուամբ վախճանեցաւ ձեր հօրեղբայրը: Այս կտակով իր բոլոր ստացուածքը կը թողու ձեր մէջէն անոր, որ ամենէն օգտակար կերպով գործածած է ամի մը ցորենը զոր ձենէ ամէն մէկուն տուի, երբ ասկէ կը մեկնէի: Այլ, տեսնեմ, ի՞նչ ըրիք այն ցորենը: Ատողֆոս ըսաւ. «Հայր, ես պահած եմ ցորենը զոր ինձի տուիր: Փոքրիկ սնտուկ մը շինել տալով անոր մէջ լեցուցի, և դրի չոր տեղ մը ուր անարատ մնացած է:» Մը Սթէյնըր խոժոռ դէմքով նայելով իր անդրանիկ որդւոյն ըսաւ. «Տղաս, ցորենը պահելով քեզի կամ ուրիշներուն ի՞նչ օգուտ ըրիր: Այնչէս Սյուպէս ստակ դիզելով կամ պահելով մարդ ոչ իր անձին և ոչ այլոց օգուտ կ'ընէ: Բան մը օգտակար եղանակաւ գործածելու կերպն այս չէ:» Յետոյ խօսքը երկրորդ որդւոյն ուղղելով ըսաւ. «Հենրիկոս, դո՞ւն ինչ ըրիր ցորենը:»

Հենրիկոս ըսաւ. «Հայր, այն ցորենը ես ալիւր ընելով գեղեցիկ կարկանդակ մը շինել տուի և կերայ:»

Հայրը երկրորդ որդւոյն պատասխանին ալ չհասնելով ըսաւ. «Յիմար տղայ, այսպէս ընելով ցորենը կորուսիր: Յորեն և ստակ օգտակար կեր-



ՎԵՐՉՈՒՅԻՆ ՀԱՅՐ ԳՏԱՆ ԳՈՐԾՈՒՆ ՄԷՋ

ՏԱՆ ՄԷՋ ԿԱՆՈՆ

Մարգարիտ և Սամուէլ տան մէջ նոր եփուած հացի հոտ առին, բայց չկրցան հասկնալ թէ այն հոտն ուտի կու դար: Սամուէլ, որ դրացւոյն որդին էր, ըսաւ Մարգարտին. «Հացը վնասուեց, թերեւս կրնանք գտնել:» Տղաքը տան ամէն անկիւնը որոնեւ լով վերջապէս հացը գտան խոհատան դարակին մէջ:

Սամուէլ հարցուց Մարգարտին. «Կրնա՞նք այս հացէն պատառ մը ուտել:»

Մարգարիտ ըսաւ. «Մինչեւ որ մայրս հրաման չտայ, չենք կրնար:»

Սամուէլ ըսաւ. «Մայրս ինձի արտօնութիւնն առած է. տան մէջ ինչ որ կ'ուզեմ՝ կրնամ առանց հրամանի առնել:»

Մարգարիտ ըսաւ. «Մայրս կ'ըսէ թէ շուները միայն առանց հրամանի կ'առնեն ինչ որ կ'ուզեն:»

Ասոր վրայ սկսան երկուքը խօսակցիլ, և Մարգարտին մայրը որ մտիկ

խնդրելու են: Երբ ինէ բան մը կը խնդրեն և անոնց խնդիրը մերժելու մասնաւոր պատճառ չկայ, երբէք չեմ մերժեր անոնց խնդիրը:»


Սյուպէս խօսելէն ետքը տաք հացէն կտրելով մէյմէկ կտոր՝ տուաւ Սամուէլին և Մարգարտին: Այնուհետեւ Սամուէլ սկսաւ խորհել թէ տան մը մէջ ամէն բանի համար կանոն ըլլա՞ն ալ գէշ չէ:

ԵՐԵՔ ԱՓ ՅՈՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գերմանիոյ մէջ կերարտ Սթէյնըր անուն մարդ մը կար որ Ատողֆոս, Հենրիկոս և Պերնարտ անուն երեք որդիք ունէր: Օր մը կերարտ իր երեք որդիները կանչելով անոնց ըսաւ. «Որդեակք, ձեր սիրելի հօրեղբայրն այնպէս ծանր հիւանդ է, որ բժիշկը յուսահատած է անոր առողջութենէն: Արդ, ձեր հօրեղբայրն ինձի կը գրէ որ մեռնելէն առաջ երթամ զանի տեսնել: Հաւանական է

պով գործածելու եղանակն այս չէ : »
 Ի վերջոյ դարձաւ երբորդ որդւոյն և
 ըսաւ . « Գուն ի՞նչ ըրիր ցորենը : »
 Տղան ժպտեցաւ , և հօրը ձեռքէն
 բռնելով տարաւ դէպ ի դաշար : Երբ
 եկան իրենց արտին քով, Պերնարա
 ըսաւ իր հօրը . « Հայր , ցորենը զոր
 ինձի տուիր՝ ցանեցի այս արտին մէջ ,
 և տես , ինչ եղած է : » Այս ըսելով
 ցուցուց ցորենի ոսկեգոյն հասկերը որ
 արտին մէկ դին աճելով վէտ վէտ կը
 ծածանէին քաղցրիկ զեփուռներէն :

Հայրն ուրախացաւ , և ձեռքը դնե-
 լով Պերնարաի գլխոյն վրայ , ըսաւ .
 « Տղաս , դուն աղէկ ըրիր : Ցորենն
 ամենէն օգտակար կերպով գործածե-
 լու եղանակն այս է : Հօրեգորդ ժա-
 ուանդութիւնն առնել քեզի կը վայ-
 լէ : Ինչպէս գործածեցիր ափ մը ցո-
 րենը , նոյնպէս գործածէ ժառանգ
 դութիւնդ օգտակար կերպով : Մի
 պահեր զայն , ինչպէս Ատողֆոս պա-
 հեց իր ցորենը , և մի քեզի հա-
 մար միայն գործածեր զայն , ինչպէս
 ըրաւ Հենրիկոս իր ցորենը : Գործածէ
 զայն այլոց համար , այսինքն աղքա-
 տաց , այրեաց , որոց և Քրիստոսի
 փոքրիկներուն համար : Քրիստոս պի-
 տի չմոռնայ քու գործդ , և առա-
 տապէս պիտի վարձատրէ զքեզ , և
 դուն պիտի հասկնաս թէ որչափ ճշ-
 մարիտ է Քրիստոսի սա խօսքը . « Ա-
 ւելի երանելի է ապը քան թէ առ-
 ներ : »



ՄԵՇ ԳՈՒՆԴՎ ԱՐ

Վերի պատկերին մէջ ցուցուած
 դունդն աղէկ դաս մը կու տայ այն
 տղոց որ իրենց վրայ շատ բարձր կը
 խորհին :

Վերի պատկերն ի՞նչ է :
 Գունդ է :
 Այո՛ , մեծ գունդ է . երկիր է ուր
 մենք կը բնակինք : Եթէ երկրէս
 քանի մը հարիւր մղոն հեռանանք ,
 երկիրս պիտի տեսնենք այս գունդին
 մեծութեամբ և ձեւովը : Տիեզերաց
 մեծամեծ մարմիններուն նայելով եր-
 կիրս շատ փոքր գունդ է , և կրնաք
 հասկնալ թէ գուր որչափ փոքր էք
 երկրիս նայելով :

Աստուծոյ ստեղծուած ուրիշ մե-

ծամեծ մարմնոց մէջ այս երկիրը կը
 նմանի այն գնդակին որով կը խաղաք ,
 և թուրքիա իր 40 000.000 բնակ
 չօքը երկրիս վրայ փոքր կէտ մըն է :
 Եթէ այս բանին վրայ խորհիք , պիտի
 հասկնաք թէ գուր Աստուծոյ արա-
 բածներուն ամենափոքր մէկ մասն էք ,
 ուստի և շատ բարձր գաղափար պիտի
 չունենաք ձեր վրայ :

ԵՐԿՈՒ ՏՂԱԲ

Կը ճանչնամ տղայ մը որ միշտ
 տխուր կ'երեւի : Այս տղան միշտ իր
 անձին վրայ խորհելով , փափաքելով
 այն բաներուն զոր չունի , ժամանակը
 պարտապ անցնելով , շարունակ լայով
 և միշտ իր վիճակէն դանդաղելով
 կ'աւելցնէ իր թշուառութիւնը և
 վիշաք :

Կը ճանչնամ ուրիշ տղայ մը որ միշտ
 ուրախ և երջանիկ է : Այս տղան ու-
 թիչներուն վրայ խորհելով , իր երկ-
 նաւոր Հօրմէն շնորհուած պարգեւ-
 ներէն զո՛հ ըլլալով , աշխատելով , ոչ
 միայն իր անձին այլ և այլոց հոգ տա-
 նելով և խորհելով թէ ինչպէս կրնայ
 ուրիշները երջանիկ ընել , կ'աւելցնէ
 իր ուրախութիւնն ու երջանկութիւնը :
 Սիրելի տղաս , դուն այս երկու
 տղոցմէ ո՞րուն կը նմանիս :

ԿԱՏՈՒՆ ԵՒ ԱՆՈՐ ԶԱԳԵՐԸ

Հայրս քաջ կատուի մը պատմու-
 թիւնն ըրաւ ինձիս Կ'ուղէ՞ք այն պատ-
 մութիւնը լսել :

Օր մը կատուին ձագերը բակին մէջ
 կը խաղային , և ահա բազէ մը անոնց
 վրայէն թռչելով կ'ուղէր անոնց մին
 յափշտակել և ուտել : Բազէն իջաւ
 դէպ ի բակը , և մէկ վայրկեանի մէջ
 կատուին ձագերէն մին իր ճիրաննե-
 լուն մէջ առաւ , բայց այն ինչ պիտի
 թռչէր , անդիէն մայր կատուն յար-
 ձակեցաւ յափշտակիչ թռչնոյն վրայ :

Կատուին և թռչնոյն մէջտեղ սաս-
 տիկ կռիւ եղաւ : Թշուառ կատուն
 քանի մը տեղէն վիրաւորուեցաւ ,
 այնպէս որ գլխէն և կողերէն արիւնը
 կը վազէր , սակայն կատուն չթողուց
 թռչունը և մինչեւ վերջը կռիւը շա-
 բունակեց : Վերջապէս կատուն թռչ-
 նոյն թեւերէն մին իլից , և անկենդան
 թողուց զանի գեանին վրայ : Յետոյ
 գալով իր ձագին քով , սկսաւ լըլը
 զանի , և ձագն այն վայրենի թռչնոյն
 ճիրաններէն ազատելուն համար ուրախ
 էր : Այս ձագը մինչեւ ցլխածան
 պաքտի սիրել իր մայրը , և անհնա-
 զանդ չըլլաւ անոր , ինչպէս երբեմն
 տղայք և աղջկունք կ'ըլլան իրենց
 սիրելի մայրերուն :

ՍՈՒՐԲ ԳԻՐԲ ԿԱՐԴԱՅՈՂ ՓՈՔՐԻԿ ՏՂԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երկու պարզ մարդիկ կղզւոյ մը
 կառավարչին առջեւ կենալով Աստու-
 ծոյ խօսքը կը քարոզէին : Հոն նստող
 մարդ մը մէկէն անոնց խօսքն ընդ-
 հատելով սկսաւ սաստիկ հակառա-
 կութիւն ընել անոնց , և աղաչել կա-
 ռավարչին զանոնք իր քովէն վճռուել :
 Ասոր վրայ վերոյիշեալ երկու պարզ
 մարդոց կրտսերագոյն և փոքրագոյնը
 դէպ ի հակառակորդը դառնալով
 յանդիմանեց զանի խտաւ , և անոր
 սրտին շարութիւնը յայտնող խօսքե-
 լով : Երբ այս մարդը իր խօսքն ըմ-
 ցուց , Աստուծոյ կողմէն պատիժ ե-
 կաւ անոր հակառակորդին վրայ , և
 այն մարդը հոն մէկէն կոյր եղաւ , և
 սենեկին մէջ սկսաւ խարխափել : Քու-
 վը նստողներէն մին անոր ձեռքէն
 բռնելով զանի դուրս հանեց :

Ո՛վ էին այն երկու պարզ մարդիկ
 որ Աստուծոյ խօսքը կը քարոզէին :
 Ի՞նչ էր այն հակառակորդին անունը ,
 որուն աչքը կուրացաւ : Այս բանը
 ո՞ր կղզւոյն մէջ տեղի ունեցաւ :

ԱՆՏԵԱԼ ԱՄՍՈՅ ՀԱՐՄԱՏՅ ՊԱՏԱՍԻՈՒՆ

Այս պատասխանները կը գտնուին
 Դ թագ. Գ. 21-29 համարներուն մէջ :

Պատանի մը տանն և հինգ տարե-
 կան հասակը ինչ ընթացքի մէջ որ
 գտնուի , գրեթէ բոլոր կենացը մէջ
 այնպէս կը մնայ : Եթէ այն հինգ տա-
 րուան մէջ պատանին ուշադիր կամ
 անուշադիր , խոհեմ կամ անխոհեմ ,
 աշխատասէր կամ ծոլ , ճշմարտախօս
 կամ կեղծաւոր , պարկեշտ կամ ան-
 պարկեշտ է , մինչև վերջն այնպէս կը
 մնայ : Մարդարէութիւն պէտք չէ
 հասկնալու համար թէ քսան տար-
 ուան երիտասարդ մը ինչպիսի մարդ
 մը պիտի ըլլայ :

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒՆ ԳԻՆԵՐԸ

Ամսական Աւետարերին գինն է
 փոսթայի ծախքով տարին 1/4 արծաթ
 մէծիտիյէ կանխիկ , և մէկ թերթը 30
 փարա է :

Շաբաթական Աւետարերին գինն է
 փոսթայի ծախքով տարին 1 1/2 արծաթ
 մէծիտիյէ կանխիկ :

Ամերիկայի միտինսարաց ընկերութեան կողմէն
 խմբագիր ձ. Ք. ԿԻՒՆ
 Ֆիլաճանքլոր եօղուշու , Ամերիգան խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
 ՏՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՆՈՐ ՊՅՈՅՅԵԱՆ